ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 ապրիլի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

58
(2724)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՌՃԱՑՎԱԾ ԵՆ

Այս օրերին Ազգային Ժողովում քննարկվում է ՀՀ կառավարության 2022 թվականի գործունեության հաշվետվությունը: Այդ նույն զեկույցում անդրադարձ կա Պարեկային ծառայությանը, սակայն առկա են ցուցանիշներ, որոնք այնքան էլ իրականությանը չեն համապատասխանում: Օրինակ՝ նշվում է, թե Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի մարզերում պարեկային ոստիկանությունը սկսել է ծառայությունը: Ընթանում են Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում պարեկային ոստիկանության ներդրման նախապատրաստական աշխատանքները: Սակայն FIP-ը փաստում է, որ իրականում, նշված 6 մարզերից Պարեկային ծառայությունը 2022 թվականին գործել է միայն Շիրակի ու Լոռու մարզերում, իսկ Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի եւ Արագածոտնի մարզերում Պարեկային ծառայությունը սկսել է գործել 2023 թվականի հունվարից: Մյուս կողմից՝ ներկայացված են հենց 2023 թվականի տվյալները: Օրինակ՝ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերաբերյալ հատվածի մեծ մասը վերաբերում է 2023 թվականին տեղի ունեցած գործընթացներին: 2022 թվականի՝ կառավարության գործունեության վերաբերյալ 83-էջանոց հաշվետվության մեջ ավելի քան 90 անգամ նշվել է 2023 թվականը: Ստացվում է, որ կառավարության գործունեության ծրագրում թյուրիմացություններ կան, եւ կան ուռճացված տվյալներ, որոնք չեն վերաբերում 2022 թվականի գործունեությանը:

ՔՊ-ում այս օրերին օդը «սառած է». Փաշինյանն արդեն 2 օր է՝ խորհրդարանում է: Իշխող խմբակցության պատգամավորները գերլարված են՝ հանկարծ որեւէ բացթողում թույլ չտան վերադասի ներկայությամբ: Նկատենք, որ սովորաբար ԱԺ հերթական նիստերի օրերին ՔՊ-ականների մեծ մասն ուշացումով, կարելի է ասել, ճեմելով են գալիս նիստերին, շատ դեպքերում գալիս, գրանցվում ու դուրս են գալիս դահլիճից եւ վերադառնում են միայն քվեարկությունների ժամանակ, այնինչ երեքշաբթի, չորեքշաբթի, երբ ԱԺ նիստը պետք է սկսվեր Փաշինյանի ելույթով, նիստի սկսվելուց որոպեներ առաջ արդեն ՔՊ-ականները տեղավորվել էին, կազմ-պատրաստ սպասում էին, որպեսզի դիմավորեն Փաշինյանին, իսկ նրա ելույթի ժամանակ որեւէ մեկը չէր համարձակվում անգամ դուրս գալ նիստերի դահլիճից: Դպրոցականների նման լուռ լսում էին իրենց «ուսուցչին», ջանք չէին խնայում, որպեսզի ցույց տան, թե խիստ հետաքրքրված են նրա ելույթով: Ի դեպ, այսօր եւս բարդ օր է իշխող ֆրակցիայի պատգամավորների համար. Նիկոլ Փաշինյանը կրկին խորհրդարանում կլինի կառավարության 2021-2026 թթ. ծրագրի 2022թ.-ի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցի մասով ամփոփիչ ելույթ ունենալու համար, այդ պատճառով էլ կառավարության նիստը մեկ օրով հետաձգվել է:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ԱԱԾ-ն նախաքննության ավարտ է հայտարարում արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանին ծեծի ենթարկելու դեպքով կալանավորված անձանցից մեկի քրեական գործը: Ո՞ւմ մասին է խոսքը: Ինչպես հայտնի է, 2020թ. պատերազմի դադարեցման գործընթացով պայմանավորված՝ մի խումբ քաղաքացիների հետ Ա.Բ.-ն ներկա էր գտնվել մայրաքաղաք Երեւանում, որտեղ կառավարության, Ազգային ժողովի վարչական շենքերի դիմաց, դրանց ներսում եւ ՀՀ վարչապետին հատկացված կեցավայրի մոտ կատարվում էին զանգվածային անկարգություններ: Նշվում է նաեւ, որ նա միացել է ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրող զանգվածային անկարգությունների մասնակիցներին, ճեղքելով վերջիններիս շարքերը՝ մոտեցել է արդեն իսկ գետնին ընկած Արարատ Միրզոյանին եւ ոտքով հարվածել է վերջինիս՝ այդկերպ բռնություն գործադրելով նրա նկատմամբ: Խոսքը Արա Բադոյանի մասին է, ու նրա մասով գործը ուղարկվում է դատարան: Նշենք, որ Բադոյանը չի ընդունում մեղքը՝ հայտարարելով՝ երբ մոտեցել է Միրզոյանին, նա արդեն գետնին ընկած է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանի որդու՝ Արա Օսկանյանի գործողությունների մասով ՀՀ քննչական կոմիտեում քրեական գործ է հարուցված խարդախության հատկանիշներով: Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Օսկանյանի որդին կալանքի տակ գտնվող գույքը վաճառել է, ինչի առթիվ իրավապահներին հաղորդում է ներկայացվել հանցագործության մասին, որտեղ էլ տրվել է Օսկանյանի որդու՝ Արա Օսկանյանի անունը: Իհարկե, առաջին դեպքը չէ, որ Վարդան Օսկանյանի որդին հայտնվում է իրավապահների տեսադաշտում: Հիշեցնենք՝ 2017 թ. փետրվարի 17-ին, Հայաստանի քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Կոտայքի քննչական բաժնի քննիչի որոշմամբ, ձերբակալվել էին 33-ամյա Արա Օսկանյանն ու 25-ամյա Հրանտ Սերադարյանը: Վերջիններս կասկածվում էին քաղաքացու առեւանգելու համար՝ պարտքը վերադարձնելու պահանջով, ավելի ուշ գործը կարճվեց: Այս պատմության մեջ ուշագրավն այն էր, որ ԱԺ նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանի՝ կալանքի տակ գտնվող տունը նորահայտ գործարար Նարեկ Նալբանդյանը գնեց, ընդ որում՝ մաս-մաս վճարելու տարբերակով, սակայն իրավապահները ո՛չ վաճառողին, ո՛չ էլ գնորդին չեն պատժում:

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԸ ԲԵՌ ՉԷ, ԱՅՆ ՎԱՀԱՆ Է

«Նիկոլ Փաշինյանը երբ Ստեփանակերտում հայտարարում էր՝ Արցախը Հայաստան է ու վերջ, այդ ժամանակ Մադրիդյան սկզբունքներ կայի՞ն, թե՞ չկային». Դավիթ Բաբայան:

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախի շուրջ տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ զրուցել է Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանի հետ:

-Պարո՛ն Բաբայան, Ադրբեջանի նախագահը վերջերս հերթական սպառնալիքն է հնչեցրել Արցախում բնակվող հայերի հասցեին՝ հայտարարելով. «Ղարաբաղում ապրող հայերը կամ պետք է Ադրբեջանի քաղաքացիություն ստանան, կամ ապրելու համար այլ տեղ գտնեն»: Ինչպե՞ս կարձագանքեք սրան: Ըստ Ձեզ՝ հերթական սպառնալի՞քն էր սա:

-Մեզ համար դա նորություն չէր. սա ոչ այլ ինչ է, քան շովինիզմի եւ նացիզմի քաղաքականություն միջազգային հանրության բացարձակ պապանձվածության պայմաններում: Որեւէ մեկը հայտարարություն չի արել՝ քննադատելով Ադրբեջանի նախագահին, թե այս ինչ է ասում. կարո՞ղ է սա Երրորդ ռայխի կուսակցական հանդիպումն է կամ համագումարն է, որ այդպիսի գաղափարներ են հնչեցվում: Որտե՞ղ է միջազգային դատարանը, որտե՞ղ են միջազգային կազմակերպությունները, որտե՞ղ են այն մարդիկ, որոնք Երեւանում ամեն պատեհ ու ոչ պատեհ առիթներով բղավում էին մարդու իրավունքների պաշտպանության մասին: Ալիեւը մի ամբողջ ժողովրդի ցեղասպանության է ենթարկում: Նման անտարբեր կամ խրախուսող պահվածքը խարխլում է ոչ միայն միջազգային իրավունքը, այլ նաեւ ժողովրդավարության եւ մարդու իրավունքների նկատմամբ վստահությունը: Մենք տեսնում ենք, որ ամեն ինչ խառնվել է, արժեզրկվել է, իլյուզիաներով չպետք է ապրենք:

-Այսինքն՝ միջազգային հանրության լռության հետեւա՞նք է Ալիեւի այս սպառնալից հռետորաբանությունը:

-Միջազգային հանրության լռության եւ խրախուսման հետեւանքով է այս ամենը: Սիրիայի նախագահ Ասադին կամ Ռուսաստանի նախագահին են փորձում դատել, իսկ մի մարդու, որը ցեղասպանութուն է իրականացնում ու բացեիբաց դրա մասին խոսում է, չի ճանաչում միջազգային դատարանի որոշումը, թքած ունի ամեն ինչի վրա, ասում են՝ սա լավ մարդ է, աշխատում են հետը, պայմանագրեր են կնքում, ձեռքն են սեղմում. սա է իրականությունը:

-Պարո՛ն Բաբայան, իր գրեթե բոլոր ելույթներում Նիկոլ Փաշինյանը մի թեզ է առաջ տանում՝ Մադրիդյան սկզբունքներով Հայաստանը ճանաչել է Արցախն Ադրբեջանի կազմում: Նման հայտարարությունները չե՞ն վնասում բանակցային հետագա գործընթացին:

-Ես չեմ ուզում որեւէ մեկին մեկնաբանել, բայց կասեմ հետեւյալը. ըրեւէ մեկը 1988թ.-ից հետո՝ Ադրբեջանից ու Թուրքիայից հետո չի ճանաչել Արցախն Ադրբեջանի մաս: Փաշինյանը երբ այցելել էր Ստեփանակերտ ու հայտարարում էր՝ Արցախը Հայաստան է ու վերջ, այդ ժամանակ Մադրիդյան սկզբունքներ կայի՞ն, թե՞ չկային: Մադրիդյան սկզբունքներում գրված չէ, թե Արցախն Ադրբեջանի մաս է: Ադրբեջանը պնդում է դա, մենք էլ պնդում ենք, որ այդպես չէ, մենք պետք է մեր գաղափարներին տեր կանգնենք, իրենք էլ իրենց գաղափարներին թող տեր կանգնեն, խնդիր չէ: Ամենակարեւորն այն է, որ մենք սկզբունքորեն շարունակենք մեր պայքարը, քանի որ Արցախը կորցնելուց հետո Հայաստան չի լինելու. քանի անգամ ենք սա ասել, ասողին լսող է պետք, ասել ենք, որ Արցախը բեռ չէ. այո՛, այն ծանր է, բայց վահան է: Հիմա Արցախը ջախջախված է, տեսնում եք՝ Հայաստանից կտոր-կտոր վերցնում են, վերջում էլ գալու են սրընթաց կերպով Հյուսիսային պողոտայում նստեն:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԿՍՏԱՆԱՆ

ՀՀ պաշտպանության նախարարությունը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ եւ առաջարկում է փոփոխություններ կատարել ««Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում:

Օրենքի նախագծի համաձայն՝ նախատեսվում է մարտական գործողությունների ժամանակ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց շարքում լրացնել նաեւ զինվորական պաշտոնի նշանակված զինվորական ծառայության մեջ չգտնվող անձանց:

Հիմնավորման մեջ նշվում է, որ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ը Ադրբեջանի կողմից սանձազերծված մարտական գործողությունների ժամանակ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետեւանքով զոհված, թափուր զինվորական պաշտոնի նշանակված, զինվորական ծառայության մեջ չգտնվող անձի կյանքին պատճառված վնասի հատուցումն ապահովելու անհրաժեշտությամբ:

Բանն այն է, որ թափուր զինվորական պաշտոնի նշանակված, զինվորական ծառայության մեջ չգտնվող անձինք ներառված չեն փոխհատուցում ստացող անձանց շրջանակում, որի կապակցությամբ նրանք զրկված են օրենքով սահմանված մարտական գործողությունների ժամանակ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքից: Ընդ որում՝ այս պահին նման խնդիր է ծագել մեկ անձի մասով, որի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել խնդիրը լուծել համակարգային՝ նման կարգավիճակ ունեցող անձանց ներառելով օրենքի գործողության ոլորտում:

ԱՄՈՒՍՆԱՑՆՈՒՄ Է ԴՍՏԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեկ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի ավագ դուստրն ամուսնացել է: Տեղեկացանք, որ զույգի հարսանեկան միջոցառումը նեղ միջավայրում է անցել Արցախում: Ներկա են եղել միայն մտերիմ հարազատները, ընկերները, իսկ իշխանական վերնախավից էլ միայն Հարությունյանի ամենամտերիմները: Միջոցառումն անցել է առանց շքեղությունների: Արցախում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ փորձել են մեծ աղմուկ չբարձրացնել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ փեսացուն Արայիկ Հարությունյանի դստեր համակուրսեցին է եղել՝ Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքից:

ՈՒՂԱՐԿՎԵՑ ԴԱՏԱՐԱՆ

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանի գործով նախաքննությունն ավարտվել է: Ազգային անվտանգության ծառայությունն այն կուղարկի դատարան: Խոսքը 2017թ.-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԲՀԿ-ի օգտին ընտրակաշառք բաժանելու գործին է վերաբերում, որով մեղադրանք է առաջադրվել 9 անձի, այդ թվում՝ Ծառուկյանին՝ ընտրակաշառք տալը կազմակերպելու համար: Եւս 5 մարդու էլ մեղադրանք է առաջադրվել ընտրակաշառք տալու համար: Այս գործով հարցաքննվել է 162 մարդ: Հիշեցնենք, որ նախորդ գումարման խորհրդարանում Գագիկ Ծառուկյանին զրկել էին պատգամավորական անձեռնմխելիությունից, նրան մեղադրանք էր առաջադրվել, սակայն գրավի դիմաց ազատ էր արձակվել: Հետաքրքիր է, որ այս գործով մեղադրվող բոլոր անձանց առնչվող քրեական գործերը կարճվել են, եւ միայն Ծառուկյանի գործն է ուղարկվում դատարան: Ի դեպ, սա մեծ հաշվով փուչիկ գործ էր, քանի որ այդպես էլ հիմնավոր ապացույցներ ձեռք չէին բերվել, որ Ծառուկյանն ընդհանրապես կապ ուներ ընտրակաշառքի թեմայի հետ, պարզապես քաղաքական նպատակահարմարությունից ելնելով՝ նրա նկատմամբ հարուցվեց քրեական գործ, եւ հիմա ստիպված են գործն ուղարկել դատարան:

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

Ապրիլի 21-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը կգնա խորհրդարան: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Վարդապետյանը կգնա ԱԺ, որպեսզի Պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում ներկայացնի Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդումը:

Մշտական հանձնաժողովի նիստում այդ հարցի քննարկումից հետո դատախազի հաղորդումն արդեն կներկայացվի ԱԺ լիագումար նիստում: Մենք տեղեկացանք, որ հաղորդումը բաղկացած է 164 էջից, եւ մանրամասն անդրադարձ է կատարված տարբեր ոլորտների:

Հավելենք, որ Աննա Վարդապետյանը նախորդ տարվա սեպտեմբերին էր ստանձնել իր պաշտոնը, եւ նշանակում է, որ հիմնականում խորհրդարանում խոսելու է նախորդ դատախազ Արթուր Դավթյանի աշխատանքի մասին:

ՀԱՅՏՆԻ Է ՀԱՆԴԻՊՄԱՆ ՕՐԸ

ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը տեղեկացրել էր, որ զոհված եւ անհետ կորած զինծառայողների ծնողների հետ հանդիպումը հետաձգվում է:

«Հարգելի՛ լրագրողներ,

ցանկանում եմ տեղեկացնել, որ սույն թվականի ապրիլի 19-ի՝ ժամը 11:00-ի հանդիպումը հետաձգվում է, քանի որ ապրիլի 18-ից հրավիրվել է ԱԺ արտահերթ նիստ, որին մասնակցում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Այդ պատճառով անվտանգության աշխատակիցները արգելում են որեւէ քաղաքացու մուտքն Ազգային ժողովի շենք, ուստի ես չեմ կարողանալու ապահովել 44-օրյա պատերազմում զոհված եւ անհետ կորած զինծառայողների ծնողների մուտքը խորհրդարան, հետեւաբար ստիպված եմ քննարկումը հետաձգել:

Անցկացման օրվա եւ ժամի մասին կտեղեկացվեք լրացուցիչ, երբ ԱԺ արտահերթ նիստերն ավարտվեն»:

Ավելի ուշ ԱԺ լրատվական ծառայությունից տեղեկացրին, որ հանդիպումը տեղի կունենա ապրիլի 20-ին՝ ժամը 14:00-ին, Ազգային ժողովի նոր մասնաշենքի 314 դահլիճում:

ՓՈՐՁԵԼ Է ՍՊԱՆԵԼ ՄՈՐԸ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ապրիլի 18-ին Լոռու մարզի բաժին ահազանգ է հնչել մի կնոջից, որ ժամը 11:00-ին որդին՝ Ս. Ու.-ն ,որը հաշվառված է հոգեբուժարանում, կոնկրետ ինչ-որ ապրանք չգնելու հարցի շուրջ վիճաբանել է իր հետ, ձեռքով սեղմելով իր կոկորդին՝ փորձել է շնչահեղձ անելով սպանել, բացի այդ, նույն օրը՝ ժամը 11:00-ից մինչեւ ապրիլի 18-ի ժամը 09;00-ն, դանակի սպառնալիքով իրեն զրկել է ազատ տեղաշարժի եւ ոստիկանություն դիմելու հնարավորությունից: Կնոջ ահազանգով դեպքի վայր են շտապել իրավապահները եւ Ս. Ուլուխանյանին տեղափոխվել են հոգեբուժարան:

ՂԱՐԱԲԱՂ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԼԻՏՎԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

Վահագն Խաչատուրյանը Լիտվայում է: Այնտեղ տեղի է ունեցել նախ Վահագն Խաչատուրյանի դիմավորման ոչաշոնական արարողությունը: Երկու երկրների նախագահների առանձնազրույցին հաջորդել է պատվիրակությունների ընդլայնված կազմով հանդիպումը: Հանդիպման ընթացքում Լիտվայի նախագահը շնորհակալություն է հայտնել այցելության համար եւ շեշտել, որ բարձր մակարդակի փոխայցելությունները հավելյալ խթան են հայ-լիտվական բարեկամական հարաբերությունների զարգացման համար:

Պատվիրակությունների հանդիպման ընթացքում քննարկվել է ղարաբաղյան հակամարտության կարգավորման, Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շրջափակման եւ տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ հարցերի լայն շրջանակ:

Երկուստեք շեշտվել է հումանիտար խնդիրների հաղթահարումն ու առանց նախապայմանների լուծումը: Նախագահ Նաուսեդան, անդրադառնալով հայ-ադրբեջանական հարաբերություններին, իր պատրաստակամությունն է հայտնել հնարավորությունների սահմաններում իր նպաստը բերել մեր տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

Վահագն Խաչատուրյանը եւ Գիտանաս Նաուսեդան Լիտվայի նախագահի նստավայրում տեղի ունեցած հանդիպումների արդյունքներն ամփոփել են զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար հայտարարություններով:

Վահագն Խաչատուրյանն իր կատարած հայտարարության մեջ ընդգծել է, որ Հայաստանը մեծ կարեւորություն է տալիս բարեկամ Լիտվայի հետ հարաբերությունների շարունակական զարգացմանն ու ամրապնդմանը, որի համար առկա են բոլոր նախադրյալները:

Նա բարձր է գնահատել Լիտվայի նախագահի հետ հանդիպելու հնարավորությունը վարչապետի եւ խորհրդարանի նախագահի հետ երկկողմ օրակարգը քննարկելու, ինչպես նաեւ ԵՄ-ի հետ Հայաստանի համագործակցության, տարածաշրջանում տիրող իրավիճակի մասին տեսակետներ փոխանակելու համար:

«Վերջին տարիների բարձր մակարդակի հանդիպումների ինտենսիվությունը վկայում է փոխշահավետ համագործակցությունը բոլոր ուղղություններով առավել ընդլայնելու երկկողմ հանձնառության մասին:

Լիտվան ԵՄ մեր կարեւոր գործընկերներից է, եւ մենք բարձր ենք գնահատում Հայաստան-Եվրամիություն գործընկերության շրջանակներում մեր երկու երկրների միջեւ ձեւավորված արդյունավետ փոխգործակցությունը»,- ասված է Հայաստանի նախագահի հայտարարության մեջ:

Երկու երկրների նախագահներն անդրադարձել են նաեւ անվտանգային եւ տարածաշրջանային նշանակության հարցերի: Քննարկել են տարածաշրջանում հարատեւ խաղաղություն հաստատելուն ուղղված Հայաստանի ջանքերը: Այս համատեքստում Վահագն Խաչատուրյանն ընդգծել է Արցախում եւ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող հայկական մշակութային կոթողների պահպանման անհրաժեշտությունը:

Լիտվայի նախագահն էլ իր խոսքում ընդգծել է Լիտվայի եւ Հայաստանի միջեւ բազմաշերտ համագործակցության խորացմանն ու զարգացմանն ուղղված իր պատրաստակամությունը:

Գիտանաս Նաուսեդան կարեւորել է նաեւ երկու երկրների միջեւ ինչպես երկկողմ, այնպես էլ Եվրամիության հարթակում արդյունավետ համագործակցությունը: Իր խոսքով՝ այդ համագործակցության արդյունքներից է նաեւ հայ-ադրբեջանական սահմանին Եվրամիության քաղաքացիական դիտորդական առաքելության տեղակայումը:

Ն.Հ.

ԼՈՒՐԵՐ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՉԿԱ

Ապրիլի 25-27-ը ՀՀ ԱԺ պատվիրակությունը կգործուղվի Մադրիդ: ԱԺ կայքում հրապարակված որոշման մեջ, սակայն, գործուղման օրակարգի մասին որեւէ տեղեկություն չկա:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակության կազմում կլինեն Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը, ՔՊ-ական պատգամավորներ Մարիա Կարապետյանը, Լենա Նազարյանը եւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լիլիթ Գալստյանը:

Պատգամավորների գործուղման հետ կապված ճանապարհածախսի, օրապահիկի, ինչպես նաեւ գիշերավարձի ծախսերը կկատարվեն պետբյուջեի հաշվին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ապրիլի 19-ին պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ընդունել է ՀՀ-ում Հնդկաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Նիլակշի Սահա Սինհային:

Պաշտպանության նախարարը շնորհավորել է դեսպանին Հայաստանում առաքելությունը սկսելու կապակցությամբ եւ մաղթել արդյունաշատ աշխատանք:

Հանդիպմանը քննարկվել են պաշտպանության բնագավառում համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր: Սուրեն Պապիկյանը բարձր է գնահատել Հայաստան-Հնդկաստան համագործակցության ներկա մակարդակը՝ նշելով, որ երկկողմ համագործակցությունը թեւակոխել է զարգացման նոր փուլ: Դեսպանը հայտնել է հնդկական կողմի՝ համագործակցության զարգացման պատրաստակամությունը: Զրուցակիցները քննարկել են նաեւ տարածաշրջանային անվտանգությանն առնչվող մի շարք հարցեր:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՉՈՒՆԵՆ

Կրեմլում կարծում են, որ Բաքվի եւ Երեւանի հետ Ղարաբաղի վերաբերյալ պայմանավորվածություններն այլընտրանք չունեն, պետք է իրականացնել դրանք. այս մասին հայտարարել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը (տեղեկացրել է «ՌԻԱ Նովոստի»-ն):

«Կրեմլում պատրաստ են ողջունել Բաքվի եւ Երեւանի միջեւ լարվածության թուլացմանն ուղղված ցանկացած քայլ»,- նշել է Պեսկովը:

«Մենք պատրաստ ենք ողջունել կողմերի ցանկացած քայլ, որը կարող է հանգեցնել լարվածության թուլացման, եւ որը կնպաստի հետագա առաջընթացին ռուս-հայ-ադրբեջանական եռակողմ պայմանավորվածությունների կատարման ուղիով»,- ասել է Պեսկովը՝ պատասխանելով այն հարցին, թե արդյոք Մոսկվան ինչ-որ կերպ կմասնակցի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության կարգավորմանը:

«Այդ եռակողմ պայմանավորվածություններն այժմ կարգավորման միակ իրական, իրատեսական բազան են, ուստի բոլոր պայմանավորվածությունների կատարման ուղիով առաջ ընթանալը համարում ենք անայլընտրանքային եւ անհրաժեշտ բոլորի համար»,- ասել է նա:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Ո՞Վ Է ԹՇՆԱՄՈՒՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴԱԾ ԿԱՊԻՏԱՆԸ

Այս տարվա հունվարի 23-ին Ազգային անվտանգության ծառայությունը հայտնել էր, որ Հայաստանի քաղաքացի, ՊՆ N զորամասի կապիտանի կողմից պետական դավաճանության դեպք է բացահայտել:

Մասնավորապես՝ սպան 2021 թվականի սկզբից հայտնվել է օտարերկրյա հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում եւ հավաքագրվել նրանց կողմից: Այնուհետեւ, ծառայության նշանակվելով ՀՀ ՊՆ մեկ այլ զորամասում՝ որպես զորամասի ծառայություններից մեկի պետ, ծառայության ընթացքում օտարերկրյա հատուկ ծառայություններից հաղորդագրությունների միջոցով ստանալով համագործակցությունը շարունակելու վերաբերյալ առաջարկություն եւ ընդունելով այն, պարտավորվել է վարձատրության դիմաց հավաքել եւ օտարերկրյա հատուկ ծառայություններին հանձնել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, տարածքային անձեռնմխելիությանը եւ արտաքին անվտանգությանն ի վնաս օգտագործելու համար ռազմական բնագավառի պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ:

Ըստ ԱԱԾ-ի՝ կապիտանը «2021 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում հավաքել եւ իր կողմից օգտագործվող տարբեր բջջային հավելվածների միջոցով օտարերկրյա հատուկ ծառայության ներկայացուցչին է հանձնել պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող ռազմական բնագավառի տեղեկություններ, մասնավորապես՝ իրենց ստորաբաժանման պահպանության ներքո գտնվող սպառազինության, զինատեսակների, քանակի, մարտական դիրքի տեղակայման վայրի վերաբերյալ տեղեկություններ եւ այլ տվյալներ՝ լուսանկարներով ցուցադրել է սպառազինությունը եւ զինատեսակների քանակը, այդ թվում՝ Հնդկաստանից ձեռք բերված ռազմական տեխնիկայի վերաբերյալ»: Որպես վարձատրություն՝ սպան օտարերկրյա հատուկ ծառայության ներկայացուցչից 2 անգամ տարբեր օրերի ընթացքում ստացել է գումար եւ բջջային հեռախոս՝ «այդ կերպ կատարելով պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության»:

Կապիտանը կալանավորված է: Այսպիսով, ArmLur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել, թե ով է կապիտանը, որ հայտնվել է օտարերկրյա հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում: Վերջինս Վահե Հակոբյանն է. նա, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության քաղաքացի, պայմանագրային զինվորական ծառայության մեջ գտնվելով ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասում, ի պաշտոնե եւ ծառայության բերումով հնարավորություն ունենալով առնչվելու պետական ու ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների եւ փաստաթղթերի, ինչպես նաեւ ռազմական բնույթի գործողությունների հետ, լրտեսության, օտարերկրյա պետության ներկայացուցիչներին ռազմական բնագավառում ծառայողական գաղտնիք հանդիսացող եւ ռազմական բնույթի այլ տեղեկություններ հանձնելու, թշնամական գործունեություն իրականացնելու համար օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցչին այլ օգնություն ցույց տալու եղանակներով կատարել է պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության: Գործով նախաքննության ավարտ է հայտարարվել, եւ այն ուղարկվել է դատարան:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՊԱՅԹԵՑՆԵԼ «ԿԱՊՈՒՅՏ» ՄԶԿԻԹԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Նարեկ Մելիքբեկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, մեկ ընդհանուր նպատակ հետապնդելով եւ մեկ միասնական դիտավորության դրսեւորմամբ, ցանկանալով կազմալուծելու եւ խաթարելու պետական մարմին հանդիսացող ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 911 ծառայության գործունեությունը, հանցավոր նպատակ է ձեռք բերել, իբր, նախապատրաստվող ահաբեկչության մասին բանավոր սուտ հաղորդումներ ներկայացնել նշված ծառայություն՝ նպատակ հետապնդելով բնակչության շրջանում ստեղծել վախի մթնոլորտ, խուճապ եւ հաճույք ստանալ դրանից:



Նարեկ Մելիքբեկյանը, իրականացնելով իր հանցավոր մտադրությունը, գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունները կեղծ են, նախ 2021 թվականի ապրիլի 23-ին՝ 12:27-ին, զանգահարել է 911 ծառայություն, ներկայացել Արթուր Դեդյան անվամբ եւ հայտնել, որ ինքը ազգությամբ չեչեն է, Ադրբեջանի կողմնակից եւ պատրաստվում է ահաբեկչական ակտ իրականացնել եւ պայթեցնել ՀՀ-ում գտնվող «Կապույտ» մզկիթի շենքը: Դրանից հետո, շարունակելով միեւնույն օբյեկտի դեմ ուղղված իր դիտավորության մեջ ընդգրկված գործողությունները, նույն օրը՝ ժամը 20:09-ին, ահազանգել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 911 ծառայություն եւ իր կողմից ահաբեկչության նախապատրաստություն իրականացնելու մասին սուտ հաղորդում է ներկայացրել առ այն, որ ինքը հանդիսանում է «Չեչեն» մականվամբ ահաբեկիչ եւ, իբր, Ցեղասպանության զոհերի հուշահամալիրում 2021 թվականի ապրիլի 24-ին նախապատրաստվում է իրականացնել ահաբեկչություն:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ

ԴԻՏԱՎՈՐՅԱԼ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաղորդում է ստացվել այն մասին, որ 2023թ. ապրիլի 14-ին՝ ժամը 00:15-ի սահմաններում, Երեւան քաղաքի Արտաշիսյան փողոցում անհայտ վարորդն իր վարած «Գազ 31105» մակնիշի ավտոմեքենայով վրաերթի է ենթարկել հետիոտն, 1981թ. ծնված՝ Երեւան քաղաքի բնակչին, որը ստացած մարմնական վնասվածքներից տեղում մահացել է: Ավտոմեքենան հայտնաբերվել էր նշված տարածքին հարակից երկաթգծերի վրա:

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության, բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 2-րդ մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ սկսվել է նախաքննություն:

Իրականացված քննչական եւ վարութային՝ մարտավարական առումով արդյունավետ գործողությունների ընթացքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ նշված օրը՝ ժամը 00:00-ից 00:30-ն ընկած ժամանակահատվածում, Երեւան քաղաքի Արտաշիսյան փողոցում Երեւան քաղաքի 42-ամյա վերոնշյալ բնակչի եւ 44-ամյա բնակչի միջեւ տեղի է ունեցել միջադեպ: Մասնավորապես՝ հնչեցվել են հայհոյանքներ, որի ընթացքում 42-ամյա տղամարդն իր մոտ ապօրինի պահվող «Մակարով» տեսակի ատրճանակով մի քանի անգամ կրակել է: Դրանից հետո 44-ամյա տղամարդու քրոջորդին՝ 2006թ. ծնված անչափահասը, «Գազ 31105» մակնիշի ավտոմեքենան վարել է 42-ամյա տղամարդու ուղղությամբ, որոշ տարածք հետապնդել եւ դիտավորյալ վրաերթի ենթարկելով՝ ապօրինաբար կյանքից զրկել նրան, ապա ավտոմեքենան թողնելով մոտակայքում գտնվող գնացքի գծերի վրա՝ փախել է դեպքի վայրից:

Ձեռք բերված նոր փաստերի հիման վրա՝ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Նշված վարույթները միացվել են իրար, որով հետագա քննության իրականացումը փոխանցվել է Երեւան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնին:

Քրեական վարույթով կատարվել են դեպքի վայրի, տրանսպորտային միջոցի զննություններ, հարցաքննվել են վկաներ, նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն: Դեպքի վայրում հայտնաբերվել են կրակված պարկուճ եւ չկրակված փամփուշտներ:

Կատարված բացատրական աշխատանքի արդյունքում 17-ամյա երիտասարդը ներկայացել է վարույթն իրականացնող մարմնին եւ ձերբակալվել: Նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով, եւ նրա նկատմամբ, դատարանի որոշմամբ, որպես խափանման միջոց է ընտրվել գրավը՝ 5 մլն դրամի չափով, եւ տնային կալանքը:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 18-ից 19-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 75 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

ԸՆԴԼԱՅՆՎԵԼ Է ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Կառավարության որոշմամբ՝ լրամշակվել է մագիստրատուրայի, ասպիրանտուրայի եւ օրդինատուրայի մասնագիտությունների ցանկը, որոնցից որեւէ մեկով ՀՀ հավատարմագրված բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսհաստատություններում առկա ուսուցմամբ սովորողի (ուսանողի) աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների մասով Հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված եկամտային հարկը վերադարձվում է:

Կարգավորման նպատակն է խթանել սովորողների ուսուցումը՝ հաշվի առնելով աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող, պետության համար առաջնահերթություն եւ կարեւորություն ներկայացնող մասնագիտություններով աշխատատեղերը համալրելու պահանջը, որոնք թափուր են մնում համապատասխան կրթության եւ գիտելիքի բացակայության պատճառով:

Գործող ցանկին ավելացել է 11 մասնագիտություն մագիստրատուրայում, որոնք ներառվել են «Բնական գիտություններ, մաթեմատիկա եւ վիճակագրություն», «Ծառայություններ (սերվիս)», «Ճարտարագիտություն, արդյունաբերություն եւ շինարարություն», «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն եւ անասնաբուժություն» եւ «Առողջապահություն» ոլորտներից:

Ասպիրանտուրայի ցանկում ներառվել են «Ավտոմեքենաներ եւ տրակտորներ», «Բուսական եւ կենդական ծագման մթերքների վերամշակման եւ արտադրության տեխնոլոգիա» եւ «Բուսաբուծության, խաղողագործություն, պտղաբուծություն եւ բույսերի պաշտպանություն», իսկ կլինիկական օրդինատուրայում՝ «Մանկական նյարդաբանություն» մասնագիտությունները:

Որոշումն ուժի մեջ կմտնի 2023-2024 ուսումնական տարվանից եւ կտարածվի նաեւ նոր ընդգրկված մասնագիտություններով 2023-2024 ուսումնական տարում սովորողների վրա:

Մինչեւ 2023/2024 ուսումնական տարին ցանկից հանված մասնագիտություններով՝ «Ֆարմացիա» մասնագիտությամբ մագիստատուրա կամ «Ակնաբանություն», «Լաբորատոր ախտորոշում», «Ճառագայթային ախտորոշում», «Մանկաբարձություն եւ գինեկոլոգիա», «Սրտաբանություն (կարդիոլոգիա)» մասնագիտություններով կլինիկական օրդինատուրա ընդունված սովորողները եկամտային հարկի վերադարձի իրավունքից կօգտվեն մինչեւ ուսումնառության ավարտը:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում բացահայտվել են «Սեւանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության բուժաշխատողների կողմից կորոնավիրուսային հիվանդության (Covid-19) դեմ քաղաքացիների պատվաստված լինելը հավաստող կեղծ փաստաթղթեր կազմելու եւ էլեկտրոնային առողջության միասնական տեղեկատվական «ԱՐՄԵԴ» համակարգ մուտքագրելու դեպքեր: Նախաքննությունն ավարտվել է:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ «Սեւանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության 2 ընտանեկան բժիշկներ, ընդգրկված լինելով կորոնավիրուսային հիվանդության համավարակի դեմ պատվաստման գործընթացին, տեղյակ լինելով միայն Հայաստանի Հանրապետությունում 10 եւ ավել օր գտնվելու դեպքում օտարերկրյա քաղաքացիներին պատվաստել թույլատրելու մասին, 2021 թվականի հուլիսից հոկտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ընդամենը մեկ-երկու օր գտնվող ԻԻՀ քաղաքացիների վերաբերյալ կազմել են նրանց իբրեւ հետազոտելու եւ պատվաստման ենթակա լինելու մասին բժշկական փաստաթղթեր՝ դրանցում ներառելով ակնհայտ կեղծ տեղեկություններ եւ գրառումներ, որոնց հիման վրա՝ նշված օտարերկրացիները պատվաստվել են: Այնուհետեւ հիշյալ բժիշկները կազմել եւ հաստատել են ԻԻՀ քաղաքացիների՝ կորոնավիրուսային հիվանդության համավարակի դեմ պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատներ, մուտքագրել էլեկտրոնային առողջության միասնական տեղեկատվական «ԱՐՄԵԴ» համակարգ՝ ներառելով պատվաստման օրերի վերաբերյալ ակնհայտ կեղծ տեղեկություններ:

Բացի այդ, նույն բժշկական կենտրոնի իմունիզացիայի բուժքույրը, լինելով կորոնավիրուսային հիվանդության դեմ քաղաքացիներին պատվաստումներ կատարող պատասխանատու անձ, ԻԻՀ քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետությունում չգտնվելու պայմաններում կազմել է նրանց իբրեւ հետազոտելու եւ պատվաստման ենթակա լինելու վերաբերյալ բժշկական կեղծ փաստաթղթեր, այնուհետեւ պատվաստված չլինելու պայմաններում կազմել եւ հաստատել է կորոնավիրուսային հիվանդության դեմ նրանց պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատներ, որոնք մուտքագրել է էլեկտրոնային առողջության միասնական տեղեկատվական «ԱՐՄԵԴ» համակարգ՝ դրանցում ներառելով նշված օտարերկրյա քաղաքացիների իբրեւ պատվաստված լինելու մասին ակնհայտ կեղծ տեղեկություններ:

Պարզվել է նաեւ, որ բժշկական կենտրոնի մեկ այլ ընտանեկան բժիշկ, նույն կենտրոնի մաշկավեներաբանի խնդրանքով, վերջինիս ազգականի՝ հանրապետությունից բացակայելու պայմաններում կազմել է նրան իբրեւ հետազոտելու եւ պատվաստման ենթակա լինելու վերաբերյալ բժշկական կեղծ փաստաթղթեր: Վերջինիս փաստացի պատվաստված չլինելու պայմաններում բժիշկը կազմել եւ հաստատել է կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատներ, մուտքագրել է էլեկտրոնային առողջության միասնական տեղեկատվական «ԱՐՄԵԴ» համակարգ՝ դրանցում ներառելով գործընկերոջ ազգականի իբրեւ պատվաստված լինելու մասին ակնհայտ կեղծ տեղեկություններ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ «Սեւանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության 4 բուժաշխատողի ներկայացվել է մեղադրանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ մեկին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-457-րդ հոդվածի 1-ին մասով: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

ԵՎՍ ՄԵԿ ԱՆԳԱՄ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱԿՏ

Կոնգրեսի ստորին պալատի մի խումբ կոնգրեսականներ եւս մեկ անգամ Ներկայացուցիչների պալատին են ներկայացրել Հայոց ցեղասպանության կրթական ակտը՝ հիմնվելով այն բանի վրա, որ ԱՄՆ Կոնգրեսը եւ նախագահը պաշտոնապես ճանաչել են այս հանցագործությունը. այս մասին տեղեկացնում են Ամերիկայի Հայ դատի հանձնախմբից:

Ակտը նորից ներկայացնելու նախաձեռնությամբ հանդես են եկել կոնգրեսականներ Աննա Էշուն, Դեյվիդ Վալադաոն, Թեդ Լյուն եւ Գաս Բիլիրակիսը: Միջոցը նախատեսում է ֆինանսավորել Կոնգրեսի գրադարանի կրթական ծրագրերը Հայոց ցեղասպանության պատմության, դրանից քաղած դասերի, հետեւանքների եւ դրա համար ներկայում վճարվող գնի վերաբերյալ:

Այս օրինագծով նախատեսվում է 5 տարվա ընթացքում 10 միլիոն դոլարի ֆինանսավորում տրամադրել Կոնգրեսի գրադարանին՝ ամերիկացիներին կրթելու 1915-1923 թթ.-ին միլիոնավոր հայերի, հույների, ասորիների, քաղդեացիների, սիրիացիների, արամեացիների, մարոնիների եւ այլ քրիստոնյաների՝ Օսմանյան Թուրքիայի կողմից համակարգված եւ կանխամտածված, պետականորեն հովանավորվող զանգվածային սպանությունների, ազգային մշակույթի յուրացման կամ ոչնչացման եւ աքսորի մասին:

Հայոց ցեղասպանության կրթական ակտը փորձում է հակազդել այն քարոզչությանը, որը պնդում է, թե, իբր, «1915-1923 թթ.-ին Օսմանյան Թուրքիայի կողմից միլիոնավոր քրիստոնյաների համակարգված զանգվածային սպանություններ տեղի չեն ունեցել»:

«Քանի որ Ադրբեջանը Թուրքիայի աջակցությամբ բացահայտորեն ձգտում է ավարտին հասցնել Հայոց ցեղասպանությունը, ամերիկյան դպրոցականներին ավելի քան երբեւէ անհրաժեշտ է դասեր քաղել ողջ մարդկության դեմ դեռեւս անպատիժ, դեռ շարունակվող հանցագործությունից»,- հայտնել է Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 7 ՃՏՊ. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԱՎԵԼԻՆ ԷԺԱՆ ԳԱԶ

Ռուսաստանը պատրաստ է Ղազախստանի հյուսիսն եւ արեւելքը գազով ապահովելու համար ավելի էժան գազ վաճառել երկրին, քան Բելառուսին. հայտարարել է Ղազախստանի էներգետիկայի նախարար Ալմասադամ Սատկալիեւը:

«Նրանք մեզ գազ են տալիս շատ ավելի ցածր գնով, քան, ասենք, Բելառուսին», - չորեքշաբթի լրագրողներին ասել է Սատկալիեւը՝ խոսելով «Գազպրոմի» հետ Ղազախստանի հյուսիս եւ արեւելք գազ մատակարարելու բանակցությունների մասին: «Ռուսաստանը, հասկանալով, որ արդյունավետ աշխատանքը հնարավոր է միայն երկկողմանի ռեժիմով, ընդառաջ է գնում գնի առումով, որը եվրոպական սակագներից եւ Ռուսաստանի եւ Բելառուսի սահմանին գներից մի քանի անգամ ցածր է»,- հավելել է նա: Նախարարի խոսքով՝ տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ «Գազպրոմի» եւ Ղազախստանի QazaqGaz-ի ղեկավարության միջեւ:

«Մենք ունենք ծրագիր, կա Ռուսաստանից եկող նոր գազատարների նախապես համաձայնեցված երթուղի»,- հավելել է նախարարը:

Սատկալիեւը պարզաբանել է, որ Ղազախստանի հյուսիսի եւ արեւելքի գազամատակարարումը կիրականացվի Կաշագանի, Կարաչագանակի ռեսուրսային բազայի, Բեյնու-Բոզոյ գազատարի, ինչպես նաեւ Գազպրոմի ռեսուրսների հաշվին՝ «լրացուցիչ գազատարների կառուցման միջոցով»:

«Այս գազատարը հնարավորություն ունի շարունակվել մինչեւ Չինաստան, սակայն այժմ մենք խոսում ենք միայն Ղազախստանում գազի կարիքները հոգալու մասին»,- ասել է նա:

ՀԱՐՑՈՒՄ՝ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Սոցիալական հետազոտությունների ադրբեջանական կենտրոնը հարցում է անցկացրել ադրբեջանահրանական հարաբերությունների եւ Իրանի տարածաշրջանային շահերի վերաբերյալ: Հարցվածների 76,8 տոկոսը հայտարարել է, որ Իրանը պաշտպանում է Հայաստանի շահերը տարածաշրջանում, այսինքն՝ փորձում է իր տարածաշրջանային շահերն իրականացնել Հայաստանի միջոցով: Հարցման մասնակիցների 5,5 տոկոսը նշել է, որ Իրանը չեզոք դիրքորոշում ունի Հայաստանի եւ Ադրբեջանի նկատմամբ, եւ հարցվածների միայն 3,4 տոկոսն է ասել, որ Իրանի համար առաջնային է Ադրբեջանի շահերը: Պատասխանելով «ո՞ր գործոնը Ադրբեջանը պետք է ամենից շատ հաշվի առնի Իրանի հետ հարաբերություններում» հարցին, հարցվածների 35,7 տոկոսն ասել է, որ Իրանի հետ հարաբերություններում Ադրբեջանը պետք է հաշվի առնի այն, որ այդ երկիրն աջակցում է Հայաստանին: 29,7 տոկոսը նշել է, որ Իրանի հետ Ադրբեջանի հարաբերություններում պետք է հաշվի առնել պատմական արմատներն ու հարեւան հարաբերությունները: Մասնակիցների միայն 1,6 տոկոսն է պատասխանել, որ Իրանը պատժամիջոցների տակ գտնվող աշխարհում մեկուսացված երկիր է, իսկ 7,0 տոկոսը նշել է այլ գործոններ: Հարցվածների 64,8 տոկոսը մարտին տեղի ունեցած զինված միջադեպերը (հարձակում հիպերմարկետի վրա, պատգամավորի դեմ մահափորձ) կապել է արտաքին միջամտության փորձերի եւ սադրանքների հետ:

ԱԳՐԵՍԻԱ

ԲԱՑԱՀԱՅՏ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՕԿՈՒՊԱՑԻԱՅԻ ՓԱՍՏԸ

ՀՀ ԱԳՆ-ն հայտարարություն է տարածել՝ Հարավային Կովկասում ընթացող կարգավորման գործընթացները խաթարելու Ադրբեջանի նախագահի ջանքերի վերաբերյալ:

Այս մասին տեղեկացնում է ԱԳՆ-ն:

Հայտարարության մեջ ասված է. «2023թ. ապրիլի 18-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարությունները հերթական անգամ ի ցույց են դնում նրա մղումները՝ տորպեդահարելու Հարավային Կովկասում խաղաղության հաստատմանն ուղղված հայկական կողմի եւ միջազգային հանրության ջանքերը:

Իլհամ Ալիեւն իր այս հայտարարություններով բացահայտ արհամարհանք է ցուցաբերում միջազգային տարբեր գործընկերների նկատմամբ, ում ներկայությամբ եւ միջնորդությամբ Ադրբեջանը ճանաչել է ՀՀ տարածքային ամբողջականությունը եւ ստանձնել է մի շարք հստակ պարտավորություններ, այդ թվում՝ Ալմաթիի հռչակագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանազատման եւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքների ու անվտանգության երաշխիքների հասցեագրման համար միջազգային մեխանիզմի ստեղծման շուրջ:

Ավելին՝ Ադրբեջանի նախագահն իր հայտարարությամբ բացահայտորեն ընդունում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքների նկատմամբ ծրագրավորված ագրեսիա իրականացնելու եւ օկուպացիայի փաստը, ինչպես նաեւ անթաքույց կերպով բացահայտում է Լեռնային Ղարաբաղի բնակչությանն էթնիկ զտումների ենթարկելու իր մտադրությունները:

Ադրբեջանի նախագահը, ում ղեկավարությամբ այդ երկրում տեղի են ունենում մարդու իրավունքների եւ տարբեր խմբերի իրավունքների կոպտագույն եւ աղաղակող ինստիտուցիոնալ խախտումներ, բացահայտորեն գոյաբանական սպառնալիքներ է հնչեցնում՝ ուղղված իրենց հայրենիքում բնակվող Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչությանը:

Ադրբեջանի բարձրագույն ղեկավարության կողմից հայ ժողովրդի նկատմամբ հնչեցված ատելության խոսքն ակնհայտորեն միտված է խորացնել ադրբեջանական հանրության շրջանում հայ ժողովրդի նկատմամբ տասնամյակներ շարունակ պետականորեն քարոզվող անհանդուրժողականությունը եւ ատելությունը, ինչի հետեւանք են նաեւ Ադրբեջանի զինված ուժերի ներկայացուցիչների կողմից իրականացված պատերազմական հանցագործությունները, էթնիկ հողի վրա ռազմագերիների եւ պատանդառված քաղաքացիական անձանց արտադատական սպանությունները, դրանք իրականացնող անձանց իսկ կողմից դրանց տեսանկարահանումը եւ տարածումը՝ իբրեւ հպարտության առարկա:

Ադրբեջանի քաղաքական ղեկավարության հայտարարություններից ոգեշնչված է նաեւ այն, որ օրեր առաջ ադրբեջանցի զինծառայողն ապօրինաբար ներխուժել է ՀՀ տարածք եւ կանխամտածված կերպով դաժան սպանության ենթարկել ՀՀ քաղաքացուն եւ փորձել այդ մասին, ինչպես նաեւ բազմաթիվ այլ հայերի՝ քաղաքացիական անձանց սպանելու իր մտադրության մասին տեղեկացնել ադրբեջանական կողմին: Համոզված ենք, որ Ադրբեջանի նախագահի նշյալ հայտարարությունից հետո միջազգային հանրության շրջանում կասկած անգամ չի կարող հարուցել այս եւ վերոնշյալ հանցագործությունների՝ պետական մակարդակով կազմակերպված լինելու հանգամանքը:

Տարածաշրջանում տարիներ շարունակ կուտակված խնդիրներին կայուն եւ տեւական կարգավորումներ փնտրելու փոխարեն՝ Ադրբեջանը ուժի եւ ուժի կիրառման սպառնալիքների միջոցով փորձում է առաջ մղել իր առավելապաշտական նկրտումները: Հայկական կողմը բազմիցս ահազանգել է Ադրբեջանի կողմից վարվող այս քաղաքականության՝ իրավիճակն ապակայունացնող հեռանկարների մասին եւ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել միջազգային իրավունքի վրա հիմնված աշխարհակարգի համար նման գործելաոճի վտանգների վրա»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է հետեւյալ լոտը՝

- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, գյուղ Արզական, 2-րդ փողոց, 3 հասցեում գտնվող 152,71 ք.մ. այգետնակ, 5,1 ք.մ. ջրավազան, 15,9 ք.մ. ջրավազան, 5,91 ք.մ. /10,05 խ.մ./ պարիսպ, 1,87 ք.մ. /7,29 խ.մ./ պարիսպ, 3,73 ք.մ. /17,53 խ.մ./ պարիսպ – 0,05066 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16000000 ՀՀ դրամ:

Գույքը հանդիսանում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գրավի առարկա եւ զբաղեցված է գրավատուների կողմից: ՀՀ քաղ. օր-ի 272-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գույքի իրացումից հետո նոր սեփականատիրոջ պահանջով գրավատուն պարտավոր է մեկ ամսում ազատել գույքը:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 08.05.2023թ.-ին եւ 10.05.2023թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲԵՐԲԵՐՅԱՆԸ՝ «ԴԵՊԻ ԲԱՐՁՈՒՆՔ» ՕՐՀՆԵՐԳԻ ՄԱՍԻՆ

Կոմպոզիտոր, դիրիժոր, երաժշտական պրոդյուսեր Անդրանիկ Բերբերյանը, որը հեղինակել է Եվրոպայի ծանրամարտի առաջնության բացման արարողության երաժշտությունը, մեծ պատասխանատվությամբ է մոտեցել երկրի համար կարևորագույն միջոցառման համար նման ծավալուն աշխատանք կատարելուն: Բերբերյանը, որը «Սողոմոնի երգեր», «Կաֆկայի երազը», «Ամերիկացի», «Ավրորայի լուսաբացը» եւ շուրջ 30 այլ ֆիլմերի երաժշտության հեղինակ է, կարճ ժամանակում կարողացել է ստեղծել այնպիսի երաժշտություն, որի հիմքում է եղել հայոց պատմությունը: «Անսահման հպարս ու երջանիկ եմ, որ նման մեծածավալ նախագծի մասն եմ կազմել եւ աշխատել եմ ռեժիսոր Նաիրե Ստեփանյանի հետ: Ստեղծել եմ մոտավորապես 45 րոպե տեւողությամբ շոուի երաժշտություն՝ նվիրված Եվրոպայի ծանրամարտի առաջնության այս տարվա պաշտոնական օրհներգը, որն ամբողջությամբ ստեղծվել է Berberyan Production Studios-ում: Ի դեպ, ստուդիան է արել ամբողջ արարողության հնչունային հետարտադրական աշխատանքները՝ հանձինս Տիգրան Կուզիկյանի եւ մի ամբողջ թիմի: Ինչ վերաբերում է իմ երաժշտությանը, ապա պետք է ասեմ, որ երաժշտության հիմքում հայոց պատմությունն էր՝ մեր երկրի ստեղծումից մինչեւ արդի ժամանակներ:



Մտովի անցել եմ տարբեր ժամանակաշրջաններով, ոգեշնչվել մեր պատմական անցքերով ու հերոսական դրվագներով, որպեսզի ստեղծեմ տպավորիչ եւ միջոցառմանը հարիր երաժշտություն: Հուսով եմ, որ թե՛ երաժշտությունը, թե՛ օրհներգը կօգնեն մեր մարզիկներին, կոգեշնչեն նրանց, որպեսզի նրանք հասնեն բարձունքների»,-նշել է Անդրանիկ Բերբերյանը: Նրա խոսքով՝ուրախ է, որ թե՛ հայ, թե՛ միջազգային հանդիսատեսն անտարբեր չի մնացել այս գործից. այն հնարավոր եղավ առաջին անգամ ունկնդրել ապրիլի 14-ի բացման արարողության ընթացքում:

Արարողության երաժշտությունը Բերբերյանը հետագայում նախատեսում է ներկայացնել իր սոցիալական հարթակներում: Ինչ վերաբերում է օրհներգին, ապա այն հեղինակել եւ գործիքավորել է հենց Բերբերյանը, խոսքերը՝ Գրիգոր Կյոկչյանի: «Դեպի բարձունք» օրհներգը միջոցառմանը կատարեց Արամ Mp3-ը, երգի տեսահոլովակի պրեմիերան տեղի ունեցավ ապրիլի 15-ին: Երգը հասցրել է սիրվել հանդիսատեսի շրջանում: Անդրանիկ Բերբերյանն առաջին անգամ չէ երաժշտություն հեղինակում մասշտաբային նախագծի համար. 2021 թվականին նա գրել է ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված միջոցառման երգը, իսկ 2022 թվականին՝ Դուբայի էքսպոյի Հայաստանի մասնակցության վիզուալացված նյութի երաժշտությունը: Երեւանը հյուրընկալում է ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը: Այն անցկացվում է ապրիլի 15-23-ը:

ՅՈՒՅԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՏԱՆԳՈՅԻ ԵՐԵԿՈՆԵՐ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւանում սպասվում են էլեկտրոնային երաժշտության եւ տանգոյի հետաքրքիր համադրումներ. մայիսի 9-ին, 10-ին եւ 11-ին Հայաստանում հանդես կգա տանգոյի ոլորտում աշխարհում հանրահայտ երաժշտական խմբերից մեկը՝ Otros Aires-ը:

20 տարվա բեմական գործունեության ընթացքում նրանք թողարկել են 8 ստուդիական ձայնասկավառակ, 45 համերգային շրջագայություն՝ ամբողջ աշխարհում:

Էլեկտրո տանգոյի սիրահարներին սպասվում են անմոռանալի երեկոներ, իսկ շոուն հագեցած կլինի պրոյեկցիոն աուդիովիզուալ ցուցադրություններով եւ բազմաթիվ այլ դիտարժան անակնկալներով: Խումբը հանդես կգա բացառիկ ծրագրով մայիսի 9-ին FOODPARK BY DOWNTOWN-ում, մայիսի 10-ին՝ «Վան Արդի» գինեգործարանում , իսկ մայիսի 11-ին՝ «Արամ Խաչատրյան» համերգասրահում:

ԼՈՒՐԵՐ

ԳԼԽԱՎՈՐ ԴԵՐԱՍԱՆ

50 Cent-ը Մել Գիբսոնի հետ հանդես կգա Boneyard ֆիլմում՝ պրոդյուսեր Քոլին Բեյթսի ինդի-քրեական թրիլլերում: Ռեփերը հանդես կգա գլխավոր դերում:

Ֆիլմում, որն արդեն սկսել է արտադրվել Լաս Վեգասում, նկարահանվում են նաեւ Նորա Ջեհեթները եւ Բրայան Վան Հոլթը, որը նախկինում նկարահանվել է «Զոն՝ ընդդեմ Քերոլայնի» ֆիլմում:

Ֆիլմի սյուժեն ոգեշնչված է իրական իրադարձություններով: Խոսքը ՀԴԲ գործակալի (Գիբսոնի) մասին է, որն Ալբուկերկի ոստիկանական բաժանմունքի հետ հետապնդում է «Ոսկոր հավաքող» մականունով սերիական մարդասպանին: Որոնումների ընթացքում բաժնի պետը եւ նրա գործընկերը մտահոգություն են հայտնում, որ մարդասպանն իրականում կարող է լինել նրանցից մեկը:

Boneyard-ի թողարկման ամսաթիվը դեռեւս հայտնի չէ:

ՍՏԻՊՈՒՄ Է «ԳԼՈՒԽ ԿՈՏՐԵԼ»

Չծերացող Ջենիֆեր Էնիսթոնը ստիպում է «գլուխ կոտրել»՝ հասկանալու համար, թե ինչպես է նա դա անում: Չնայած նա 54 տարեկան է, բայց դերասանուհին հրաժարվում է ծերանալ, իսկ երկրպագուները փորձում են պարզել, թե ինչ է անում նա այդքան երիտասարդ տեսք ունենալու համար: Երիտասարդության աղբյուրը, կարծես, միակ բացատրությունն է:

Էնիսթոնին բազմիցս հարցրել են նրա գաղտնիքների մասին: 2021 թվականին Vouge-ի հետ զրույցում «Ընկերները» սերիալի աստղը բացահայտել է, որ հաճախակի օգտագործում է կոլագենի պեպտիդային հավելումներ: Հոլիվուդյան աստղը նաեւ իր արտաքին տեսքը վերագրել է իր մտածելակերպին: «Մայրս միշտ եղել առողջ եւ սլացիկ կազմվածք է ունեցել: Դա միշտ եղել է իմ հիմքը»,- նույն հարցազրույցում պատմել է Էնիսթոնը:

Instagraշ-ի People Before էջում հրապարակված տեսանյութը երկրպագուների անվստահությունը նոր մակարդակի է հասցրել: Հոլովակը, որը տեղադրվել է ավելի քան 200,000 հետեւորդ ունեցող օգտահաշվում, ցույց է տալիս Էնիսթոնի էվոլյուցիան ժամանակի ընթացքում:

Սոցցանցի օգտատերերը շտապել են նշել, որ դերասանուհին շատ չի փոխվել վաղ հասակից մինչեւ մեր օրերը: «Աշխարհի ամենագեղեցիկ կինը»,- գրել է երկրպագուներից մեկը: «Նա ընդհանրապես չի փոխվել», - ավելացրել է մեկ ուրիշը:

● *Ապրիլի 20-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա «Հայ կոմպոզիտորական արվեստի 14-րդ փառատոն» փակման համերգը: Տոմսերի արժեքը՝5000-10000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ում է նշանակվում կերակրողին կորցնելու կենսաթոշակը եւ որ դեպքերում:

Դիանա Առաքելյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է մահացած կերակրողի ընտանիքի հետեւյալ անդամներին.

1) 18 տարին չլրացած երեխային,

2) 18 տարին չլրացած եղբորը, քրոջը եւ թոռանը, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում,

3) 18 տարեկան եւ դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակին, եթե նրա հաշմանդամության պատճառը մանկուց հիվանդությունն է, նա հաշմանդամ է ճանաչվել մինչեւ իր 18 տարին լրանալը եւ ունի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում,

4) կերակրողի մահվան օրվա դրությամբ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած կամ հաշմանդամ ճանաչված ծնողներին, ամուսնուն, եթե չեն աշխատում,

5) ամուսնուն կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձին՝ անկախ տարիքից, եթե նա զբաղված է մահացած (զոհված) կերակրողի 14 տարին չլրացած, սույն հոդվածով կենսաթոշակի իրավունք ունեցող երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան խնամքով, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) եւ չի աշխատում:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ի դեպ, նշենք, որ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունեցող հաշմանդամներին նշանակվում է հաշմանդամության նպաստ:

ՎԱՐԿԱՅԻՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ կարող է արդյոք բանկը առանց որեւէ պատճառաբանության մերժել վարկի տրամադրումը: Ուզում եմ կոնկրետ տեղեկանալ, թե ինչի հիման վրա կարող են մերժել վարկի տրամադրումը:

Սուսաննա Մելիքյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Մելիքյան հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ վարկի տրամադրումը մերժելու հիմքերը սահմանվում են բանկի ներքին կանոններով, եւ եթե բանկը մերժում է հաճախորդի՝ վարկ ստանալու վերաբերյալ դիմումը, ապա պետք է նշի մերժման հիմքը:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտնում ենք, որ վարկային պայմանագիրը չի հանդիսանում հրապարակային պայմանագիր, հետեւաբար վարկատուն ինքն է ազատորեն որոշում՝ ում հետ կնքել վարկային պայմանագիր, ում հետ՝ ոչ: Այսինքն՝ վարկատուն, գնահատելով դիմողի վարկունակությունը՝ վարկը մարելու ունակությունը, ինքն է որոշում կայացնում:

ԼՈՒՌ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայրենիքի պաշտպանության եւ անվտանգության ապահովման գործում ներդրած ավանդի, մարտական գործողությունների ընթացքում ցուցաբերած արիության եւ անմնացորդ նվիրումի համար ապրիլի 11-ին Տեղ գյուղի հատվածում զոհված 4 զինծառայողները հետմահու պարգեւատրվեցին:

Նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրով՝ ստորաբաժանման հրամանատար, մայոր Մկրտիչ Հարությունյանը պարգեւատրվեց «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, դասակի հրամանատար, լեյտենանտ Արթուր Սահակյանը, լեյտենանտ Հենրիկ Քոչարյանը, կրտսեր սերժանտ Նարեկ Սարգսյանը՝ Արիության մեդալներով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 3 + 7 +15 + 19
	Կոտայքի լեռներ	+ 4 + 6 +14 + 17
	Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 +19 + 22
	Գեղարքունիք	+ 3 + 7 +14 + 17
	Լոռի	+ 4 + 7 +18 + 22
	Տավուշ	+ 7 + 9 + 20+ 24
	Արագածոտնի լեռներ	+ 2 + 5 +13 + 16
	Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 24

	Արարատ	+ 9 + 12 +24 + 26
	Արմավիր	+ 9 + 11 +23 + 25
	Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +13 + 16
	Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 10 +22 + 26
	Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 +23 + 26
	Սյունիքի նախալեռներ	+ 4 + 6 +16 + 21
	Արցախ	+ 6 + 9 +22 + 25
	Երեւան	+ 9 + 11 +23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.04.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*